ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «*ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-16/18/4*»

ք. Երևան«» 2018թ.

20 հոկտեմբեր 2018թ.

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանի, որը գործում վարչությանկանոնադրությանհիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և §Սմարթլայն!ՍՊԸ-ն,իդեմստնօրենՏ.Ղարիբյանի, որըգործումէկանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցինսույնպայմանագիրըհետևյալիմասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողըպարտավորվումէսույնպայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանվածկարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդինմատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկականբնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդըպարտավորվումէընդունել ապրանքըևվճարելդրահամար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումի ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1073550 (մեկ միլիոն յոթանասուներեք հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնայինառաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքել իս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի	«Սմարթլայն» ՍՊԸ
Գլխավոր վարչության	ք. Երևան, Վարդանանց 110
ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 01204231	Հ/Հ 16300-7031509
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական	ՀՎՀՀ 01548908
Վարչության	էլ. հասցեն՝ ssmartline@mail.ru
Հ/Հ 900013207023	Տ. Ղարիբյան
Ա. Մանուկյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«20» հունիսի 2018թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-16/18/4»ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									Հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
4	39263400/1	ամրակ, միջին DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Մետաղական, 33մմ երկարությամբ, տուփի մեջ 100 հատ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ:	տուփ	80	4000	50	ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
5	39263410/1	ամրակ, փոքր DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Մետաղական, 28մմ երկարությամբ, տուփի մեջ 100 հատ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ:	տուփ	80	4000	50	ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
6	39263420/1	ամրակ, մեծ DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Մետաղական, 50մմ երկարությամբ, տուփի մեջ 100 հատ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ:	տուփ	80	4000	50	ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
7	39292530/1	քանոն՝ մետաղյա Ruller Metal	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, երկարությունը 30 սմ, մետաղյա:	հատ	150	1500	10	ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ	10	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
8	39711330/1	ՊարույրներLamirel	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Պարույր 32 մմ , նախատեսված գիրք կազմելու	հատ	80	4000	50	ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018

				համար							
9	39711330/2	ՊարույրներLamirel	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Պարույր 16 մմ , նախատեսված գիրք կազմելու համար	հատ	35	1750	50	*ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
10	39711330/3	ՊարույրներLamirel	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Պարույր 8 մմ , նախատեսված գիրք կազմելու համար	հատ	15	750	50	*ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
12	30192121/1	գրիչ գնդիկավոր WEN XUAN	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Գնդիկավոր տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի թանաքի գույնը՝ կապույտ, կարմիր, սև:	հատ	23	2300	100	*ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	100	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
13	30192130/1	Մատիտներ Amigo	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Մատիտ՝ HB կոշտության գրաֆիտե միջուկով, փայտյա կամ փայտին փոխարինող նյութից պատրաստված, հետևի մասում՝ ռետին:	հատ	30	3000	100	*ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	100	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
17	30197231/2	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ Dinguagua	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու անցքերով:	հատ	7	14000	2000	*ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	2000	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
18	30197235/1	թղթապանակ՝ ամրակով Doc Holder	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Կոշտ ռեզինով փակվող, ռետինե ամրակներով	հատ	220	11000	50	*ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
19	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթի համար DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD	Գրասենյակային կարիչ, 50-ից ավելի թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	4000	40000	10	*ՀՀք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	10	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018

			ՉԺՀ								
20	30197340/1	Ապակարիչ DL	YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO., LTD ՉԺՀ	Գրասենյակային ապակարիչ N10, N24 , N26 և N26.6 աստիճաններով կարված թղթերը քանդելու համար: Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար:	հատ	140	7000	50	*ՀՀ. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	50	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
22	30197622/2	թուղթ, A4 ֆորմատի Pioneer	Նավիգատոր Կոմփանի Պորտուգալիա	A4, չկավճած է էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող: մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ 80 գ/մ2 (առանց շեղումների): Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների): Առանց փայտային խեժի և գազանման քլորիպարունակության Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար Պիտանի՝ լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 105%: Հաստությունը՝ 108մկմ: Անթափանցելիությունը՝ 94%-ից ոչպակաս: Անհարթությունը (шероховатость) ոչավել՝ 180մլ/ր՝: Խոնավությունը՝ 3,5-4,5%: Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչպակասքան 150 տարի: Գործարանային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների): Մեկտուփի քաշը՝ 2,5 կգ: ISO 14001, ISO 9706, ISO 17025, ISO 11475, OHSAS 18001, NordicPine, GreenStarSystem, FSC, PEFC, ECF ստանդարտներին համապատասխան (անհրաժեշտության դեպքում կարողեն պահանջվել համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ): Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%: Ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ3 : Ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ3: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնե լապրանքի օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin):	կիլոգրամ	765	956250	1250	*ՀՀ. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	1250	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
24	30199230/2	նամակի ծրար, A5 ձևաչափի Libra	ԱՄԷ	Ծրար՝ A5 ձևաչափի, չթափանցող, սպիտակ, ինքնակպչուն	հատ	20	3000	150	*ՀՀ. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	150	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
25	30199238/2	նամակի ծրար, A6 ձևաչափի Libra	ԱՄԷ	Ծրար սպիտակ, առանց գրությունների, ինքնասոսնձվող, 115 x 225մմ, (A4 ֆորմատի թուղթը 3 մասի բաժանած)	հատ	8	4000	500	*ՀՀ. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	500	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018
27	30199430/1	թուղթ նշումների, տրցակներով Jia Te	YIWU GUYUE IMPORT AND EXPORT	Թուղթ նշումների համար՝ սպիտակ, կպչուն, տարբեր չափերի, տրցակներով 100թերթ:	հատ	130	13000	100	*ՀՀ. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ*	100	պայմանագրի կնքման պահից մինչև 31.07.2018

			CO., LTD ՉԺՀ								

* Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքների չօգտագործված լինելը նմատակարարումըմինչև Գլխավոր վարչության մասնաշենք:

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

***Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:*

****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչության
ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
Վարչության
Հ/Հ 900013207023
Ա. Մանուկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
Էլ. հասցեն ssmartline@mail.ru
Տ. Ղարիբյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«20» հունվարի 2018թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-16/18/4»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
4	39263400/1	ամրակ, միջին	... %	... %	... %	... %	... %	2000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	
5	39263410/1	ամրակ, փոքր	... %	... %	... %	... %	... %	2000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	
6	39263420/1	ամրակ, մեծ	... %	... %	... %	... %	... %	2000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	
7	39292530/1	քանոն՝ մետաղյա	... %	... %	... %	... %	... %	750	1500	1500	1500	1500	1500	1500	1500	
8	39711330/1	պարույրներ	... %	... %	... %	... %	... %	2000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	
9	39711330/2	պարույրներ	... %	... %	... %	... %	... %	875	1750	1750	1750	1750	1750	1750	1750	

10	39711330/3	պարտրներ	... %	... %	... %	... %	... %	375	1500	478125	3000	956250	3000	956250	3000	956250	3000	956250	3000	956250	3000	956250	750
12	30192121/1	գին չնդնվող չափ	... %	... %	... %	... %	... %	1150	3500	7000	3000	7000	3000	7000	3000	7000	3000	7000	3000	7000	3000	7000	2300
13	30192130/1	մատիտներ	... %	... %	... %	... %	... %	1500	7000	20000	3000	40000	3000	40000	3000	40000	3000	40000	3000	40000	3000	40000	3000
17	30197231/2	Լոգ, գծանոց գրիֆելանոցով	... %	... %	... %	... %	... %	7000	5500	20000	3000	40000	3000	40000	3000	40000	3000	40000	3000	40000	3000	40000	14000
18	30197235/1	խոնավություն չկլանող	... %	... %	... %	... %	... %	5500	2000	7000	1500	3500	1500	3500	1500	3500	1500	3500	1500	3500	1500	3500	11000
19	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթերի համար	... %	... %	... %	... %	... %	20000	7000	25000	3000	8000	3000	8000	3000	8000	3000	8000	3000	8000	3000	8000	4000
20	30197340/1	ապակարիչ	... %	... %	... %	... %	... %	3500	1000	2500	300	800	300	800	300	800	300	800	300	800	300	800	700
22	30197622/2	թուղթ, A4 ֆորմատի	... %	... %	... %	... %	... %	478125	3000	9562500	3000	9562500	3000	9562500	3000	9562500	3000	9562500	3000	9562500	3000	9562500	95625
24	30199230/2	նամակի ծրար, A5 ձևաչափի	... %	... %	... %	... %	... %	1500	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000

25	30199238/2	նամակի ծրար, A6 ձևաչափի	... %	... %	... %	... %	... %	2000	4000	4000	4000	4000	4000	4000	**4000**
27	30199430/1	թուղթ նշումների, տրցակներով	... %	... %	... %	... %	... %	6500	13000	13000	13000	13000	13000	13000	**13000**

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են ամբողջականարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչության
ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
Վարչության
Հ/Հ 900013207023
Ա. Մանուկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն ssmartline@mail.ru
Տ. Ղարիբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
« » 2018թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-16/18/4» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրընդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2018թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-16/18/4»ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն